ԼՈՒՐԵՐ

Պարիզից վերադարձաւ Թիֆլիս մեր վաղեմի աշխատակից պ. Շիրվանզադէն և այսուհետև նորից կաշխատակցէ և, մեր թերթին, Առաջիկայ համարից «Լումայ»-ում կսկսենք տպել նրա «Աւերակների վրայ» դրաման, որ դեռ հրատարակուած չէ ոչ մի տեղ։

Էջմիածնում կատարուեց եպիսկոպոսական ձեռնադրութիւն. ձեռնադրուեցաւ Դաղատիայի առաջնորդ Բաբգէն, Պանորմայի առաջնորդ Կարապետ, Կարինի առաջնորդ Սմբատ, Եգիպտոսի առաջնորդ Մկրտիչ, Կտուց անապատի վանահայր Ստեփան, Երուսաղէմի պատր. փոխանորդ Դանիէլ վարդապետները, իսկ ռուսահայ վարդապետներից՝ Երևանի փոխանորդ Խորէն և Թիֆլիզի կոնսիստորի անդամ Եփրեմ վարդապետները։

Բաբգէն սրբազանը Արմաշու սան և ապա նոյն Դպրեվանքի տեսուչ, աշխատակցում էր «Լումայ»-ին, յայտնի է իւր գրաւոր վաստակներով, որոնցից առանձին գրքով բացի ուրիշներից տրպուած է նրա մի ընդարձակ գործը՝ Եղիշէի ուսումնասիրութիւնը։

Թիֆլիսում կայացաւ «Թեմական խորհրդի» ժողովը, ուր ընտրուեցան Ներսիսեան դպրոցի համար լրացուցիչ հոգաբարձական ընտրութիւններ։

Ն. Նախիջևանում կատարուել է Դր. Զալխուշեանի փաստաբանական գործունէութեան քսանհինգամեակը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՔԱԽՏԻ ՆՈՐ ԴԵՂ

Շվեդական բժիշկ, դոքտոր Պֆաունէնշտիլը փորձեր է կատարում իր գտած նոր դեղով կոկորդի և թոքերի հիւանդութեան դէմ։ Առաջին փորձերը խիստ յաջող են անցել և շվեդական բժիշկները յոյս ունեն, որ նրանց պաշտօնակցի յայտնագործութիւնը մարդկութեան ձեռքին մի հզօր միջոց կտայ պատերազմելու թոքախտի՝

երկրիս ժամանակակից բնակիչների այդ ամենաչարքշնամու դէմ։

Դոքտոր Պֆաունէնշտիլի դեղը Էրլիխի դեղինման մի քիմիական միաւորութիւն է, որ սակայն գործ է դրւում հիւանդի վրայ ոչ թէ ներարկումով, այլ ներսից ընդունելով և ներշնչումով միաժամանակ։ Պֆաունէնշտիլը հիւանդին տալիս է երկու համեմատաբար չեզոք դեղեր, որոնք միաւորուելով նրա արիւնի մէջ՝ առաջ են բերում մի տեսակ քիմիական միաւորութիւն, որ ուժեղ կերպով սպանում է թոքախտի բացիլները։

Դոքտոր Պֆաունէնշտիլը հիւանդներին տալիս է մանշային նատրի (іодист. натріи) լուծուածք կամ փոշի, իսկ այնուհետև, փոքր ժամանակ անցնելու յետոյ, ներշնչել է տալիս օզոնացած օդ կամ թթուածին։ Օզոնի ներգործութիւնից մանշային նատրի վրայ հիւանդի յօրինուածքի մէջ գոյանում է ազատ մանիշ, որ ընկնելով թոքերի կամ կոկորդի հիւսուածներից մէջ, կատարելապէս ոչնչացնում է բացիլները։

Շվեդական բժիշկների փորձերն ապացուցել են, որ այս եղանակով առանձնապէս յաջող է բժշկւում կոկորդի թոքախտը, ուր աւելի հեշտ է ներս թափանցում շնչած օզոնը։

Թոքերի թոքախտը, եթէ միայն թոքերի կատարներն է հիւանդացել, բժշկւում է, բայց ինչքան որ հիւանդութիւնը տարածւում է ներքև, այնքան Պֆաունէնշտիլի դեղը թուլանում է, որովհետև օզոնը միշտ չի կարողանում թափանցել թոքերի խորքերը։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ